Այս զանգվածային դասալքությունը առանձնապես հիանդագին անդրադարձում ունեցավ կովկասեան ճակատում, ուր ընդհանուր պատճառներից զատ՝ ուժեղ էին և ազգային հակամարտությունները և Թիւրքիայի ու կովկասեան մահմեդականների իւրայատուկ փոխյարաբերությունները:

Հոկտեմբերեան յեղաշրջումը Թիֆլիսում հանդիպեց խիստ բացասական վերաբերումի: Բացի ընդհանուր պատճառներից, որով բոլշևիկեան կոմունիզմը նկատւում էր ցնորական մի ճիգ պատմությունը գիտական ընկերվարությունից դէպի ուտոպիա տանելու և, հետեւաբար, աշխատաւոր մարդկությեան բնաջրջումը առողջ ճանապարհից շեղելու, Անդրկովկասում կային և յատուկ պատճառներ. վրացի սոցիալ-դեմոկրատ մենշեւիկների համար բոլշեւիզմը, նախ և առաջ, կուսակցական հակառակորդ էր: Այն յարատեւ պայքարը, որ սոցիալ-դեմոկրատ մենշևիկ ու բոլշևիկ հատուածները վարել էին միմեանց դէմ զաղափարական ձեւերով, այժմ փոխադրւում էր գործօն քաղաքականության ասպարէզ: Շատ խոշոր տեղ էին գրաւում այս պայքարում և անձնական համակրանքներն ու հակակրանքները, երէկւայ վէճերն ու սրտցաւությունները: Հայերի համար հոկտեմբերեան յեղաշրջումը անընդունելի էր, ամենից առաջ, բոլշևիկների դէպի պատերազմն ու ճակատի պաշտպանության գործը բռնած դիրքի պատճառով. բոլշևիկների մէջ նրանք տեսնում էին քայքայող ոյժ, մինչդեռ վայրկեանը պահանջում էր Ռուսաստանի հզորությունը: Մահմեդականների աչքին բոլշևիզմը դասակարգային թշնամի էր. մահմեդական ներկայացուցիչների մեծ մասը խաներ ու բէգեր էին:

Այսպէս թէ այնպէս, Անդրկովկասը հէնց առաջին օրից բացասական դիրք բռնեց խորհրդային իշխանության վերաբերմամբ: Եւ քանի որ Սահմ. Ժողովի գոյությունը դառնում էր խնդրական, կապը կենտրոնի հետ վերացած էր, և, միւս կողմից, Անդրկովկասի Առանձին Կոմիտէն խսպառ կորցրել էր հեղինակությունը ժողովրդի աչքին, իսկ կորնիլովեան յետաշրջական փորձից յետոյ ստեղծւած ինքնապաշտպանության մարմինը նոյնպէս հմայք չունէր լայն զանգւածների մէջ, բնական կերպով, առաջ էր գալիս տեղական իշխանություն ունենալու պահանջը: Այդ նպատակով, նոյեմբ. 27-ին, հրաւիրւեց մի խորհրդակցություն Անդրկովկասի Բանւորական, Զինւորական և Գիւղացիական խորհուրդների, Թիֆլիսի Բանւ. ու Զինւորական խորհրդի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի, Հանրային Ապահովության Կոմիտէի, Անդրկ. Առանձին Կոմիտէի, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների ու Սահմ. Ժողովի անդամների, որը մանրազնին քննության առնելով տիրող կացությունը՝ որոշեց Անդրկովկասի համար ստեղծել տեղական իշխանություն՝ Անդրկովկասեան Սէյմ և Անդրկովկասեան Կոմիսարիատ, իբրև Սէյմի գործադիր մարմին: Սէյմի կազմության հիմք ընդունւեց Սահմ. Ժողովի համար ընտրւած պատգամաւորների քանակը. որոշւեց եռապատկել կուսակցական ցանկերով ընտրւած պատգամաւորների թիւը:

Անդրկովկասեան Կոմիսարիատը կազմւեց ազգային-կուսակցական ներկայացուցչության սկզբունքով: Կոմիսարիատի մէջ մտան. — Ե. Գեգեչ-